«***զրույց բառը հանդես է գալիս որպես ընդհանուր որոշիչ՝ առհասարակ արձակ գրված զանազան ոչ ծավալուն ստեղծագործությունների***» (ընդգծումը բնագրում–Ա.Ն.)[18]: Գրիգոր անունով քրիստոնյայի մասին պատմությունը, որն ընդգրկված է «Միւս պատմութիւն նեղութեանց, զոր կրեցին ազգն Հայոց յառաջնոյ Շահաբաս թագաւորէն» վերնագրով ԺԴ գլխում, իրականում վկայագրական բնույթ ունի և ներբերվել է պատմական իրադարձությունների որոշ հանգամանքների վրա լույս սփռելու նպատակադրմամբ: Սակայն այդ պատմության կարճառոտ-նպատակասլաց բնույթը, ներժանրային որոշ միավորների ու հատկապես մուտքբուն պատմություն–վերջաբան/եզրահանգում կառուցվածքային տրամաբանության առկայությունն այն վերաձևում են զրույցի:

Այդ կերպ՝ զրույցի են վերաձևվում նաև տարբեր հոգևորականների վարքերում առկա որոշ պատմություններ, որոնք միտված են լրացուցիչ կերպով ապացուցելու տվյալ հոգևորականի սրբակենցաղությունն ու ցուցանելու քրիստոնեական կրոնի զորությունը: Այդպիսին է, օրինակ, «Պատմութիւն վարդապետութեան և վարուց սրբոյ վարդապետին Պօղոսի» վերնագրով ԻԳ գլխում առկա զրույցն այն մասին, թե ինչպես Պողոս վարդապետի աղոթքների շնորհիվ մահմեդականի չբեր կինը հղիացավ և զավակ ունեցավ (տե՛ս էջ 231-232): Կամ՝ «Վասն վարդապետութեան և կաթուղիկոսութեան տեառն Փիլիպպոսի: Յորում և վասն նորոգութեան եկեղեցեաց սրբուհի կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ և յայտնելոյ նշխարաց նոցին» վերնագրով ԻԵ գլխում ընդգրկված պատմությունն այն մասին, թե ինչպես Փիլիպպոս կաթողիկոսի աղոթքների շնորհիվ յոթնամյա անդամալույծ ու համր երեխան քայլեց ու խոսեց (տե՛ս էջ 265-266):

Վկայագրելով սովի տարածման մասին պատմություններ «Յաղագս յայտնելոյ Ջալալոցն և սաստիկ սովուն և մարդակեր

---

[18] ***Արմենուհի Սրապյան,*** Հայ միջնադարյան զրույցներ, էջ 39: